

# ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## մաս 1-ին

28.12.2005թ. [համառոտ հաշվետվություն, հատվածներ]

Այս թեմատիկայով հարցումը **Vox Populi** կենտրոնն իրականացնում է 2 մասով: Մասերից յուրաքանչյուրն ինքնուրույն հետազոտություն է: Առաջին մասն իրականացվել է դեկտեմբերի 24-28-ը Երեւան քաղաքի բնակչության շրջանում: Ընդամենը հարցվել է 18 եւ ավելի տարիքի 662 երեւանցի: Հարցման մեթոդը՝ հեռախոսային, պատահական, չկրկնվող:

2-րդ հարցումը (նույն թեմայով, բայց ավելի ծավալուն) կիրականացվի Ամանորի տոներից հետո: Տեղեկացնենք, որ գուգահեռաբար իրականացվում է «Անցնող տարի, գալիք տարի» վերտառությամբ փորձագիտական հարցում, որի արդյունքները Ձեր ուշադրությանը կներկայացնենք տոներից հետո:

Ստորեւ ներկայացնում ենք առաջին հարցման շրջանակներում հարցվողներին առաջարկված մի քանի հարցերը եւ դրանց տրված պատասխանները:

«Ո՞ր ՏՈՆԵՐՆ ԵՔ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՏՈՆՈՒՄ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ» (հնարավոր է մեկից ավելի պատասխաններ):

Ամանորը	98%
իմ ծննդյան օրը	85%
մեր ընտանիքի անդամների ծննդյան օրը	67%
Սուրբ Ծնունդը	41%
Զատիկը	52%
Կանանց տոնը (մարտի 8, ապրիլի 7)	57%
Հին նոր տարին	37%
Անկախության օրը	24%
այլ պատասխաններ	3%
<b>ոչ մի տոն չեմ տոնում</b>	1%
դժվարանում եմ պատասխանել	1%

«ԱՆՁԱՄԲ ԴՈՒՔ ՈՐՏԵ՞Ղ ԵՔ ՏՈՆԵԼՈՒ ԳԱԼԻՔ ԱՄԱՆՈՐԸ»:

<b>Տանը, ընտանիքիս հետ</b>	<b>81%</b>
<b>Հյուրընկալվելու եմ (ազգականներիս, բարեկամներիս մոտ)</b>	<b>15%</b>
Տոնական միջոցառմանը (ռեստորանում, ակումբում, համերգում)	2%
այլ կերպ	1%
<b>դժվարանում եմ պատասխանել, դեռ չեմ որոշել</b>	<b>1%</b>

«Ընտրական համակարգեր» կենտրոնի

Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն

հեռ.՝ + 374 9 38 96 60

e-mail: [voxpopuli@expert.am](mailto:voxpopuli@expert.am), [info@persons.am](mailto:info@persons.am), [info@expert.am](mailto:info@expert.am)

[www.persons.am](http://www.persons.am), [www.expert.am](http://www.expert.am)